



Ան Վեհափառն է փրկուածներուն, որոնք տակաւին մեր դարուն, ահաւոր վրէժնդրութենէ մը մազապուրծ ազատուեցան:

Այս Վեհափառը, կայսրի մը իշխանութեամբ, ազգերու հովանաւորը ըլլալու նպատակը չի հետապնդեր: Ոչ, ան Վեհափառն է ժողովուրդի մը, որ ոչ թէ հզօր կայսրութեան մը պաշտպանութիւնը կը վայելէ, այլ Վեհափառն է ժողովուրդի մը, որ տարբեր կայսրութիւններու զոհասեղաններուն վրայ նահատակուած է:

Եւ վերջապէս Սրբութիւնը: Այս Սրբութիւնը ոյժի՞ մը սրբութիւնն է, որ աշխարհ կը սասանեցնէ և յափշտակութեան կը մատնէ: Ոչ, ան Սրբութիւնն է ժողովուրդի մը, որ դողաց հզօր ոյժերու առջև և տակաւին կը դողայ: Ան Սրբութիւնն է ժողովուրդի մը, որ իշխանութիւններու գլուխը կանգնող եղեռնագործ քուրմերու առջև, միայնակ ու լքուած, պապանծեցաւ: Ան Սրբութիւնն է ժողովուրդի մը, որ իր հաւատքը ոչ թէ ուրացաւ, այլ իր արեամբ վկայեց զայն թուրք-մուսուլմանական հալածանքներուն առջև: Ան ազգի՞ մը Սրբութիւնն է: Ոչ, ազգի մը Սրբութիւնը չէ ան: Ան Սրբութիւնն է օտարութեան մէջ ցրուածներու, որոնք Աստուծոյ հարստութեան մէջ կը գտնեն իրենց ապաստանը: Անիկա խաչի Վեհափառն է: Ինչպէս Մարթէն Լութեր պիտի ըսէր, ան օտար Սրբութիւն մըն է, Աստուծոյ Սրբութիւնը, ոչ թէ մարդոց: Խաչի այս Վեհափառը կը զարդարէ Կաթողիկոսը, տեսանելի կերպով և իրմով մենք ալ կը զարդարուինք: Աստուծոյ օտար Սրբութիւնը, աշխարհի մութին մէջ, կը լուսաւորէ Կաթողիկոսն ու մեզ բոլորս, որ կը հաւատամք Քրիստոսին, որպէս մեր Տէրը»:

Մեր կարծիքով, վերոյիշեալ տողերը բաւական յստակ կը բացատրեն, թէ Հայոց Կաթողիկոսը ինչ կը ներկայացնէ Եկեղեցւոյ ու հայ ժողովուրդի համար և անոնց՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսէն սպասումները: Մենք, իր ուսմունքովն ու ցարդ ցուցաբերած անուրանալի գործունեութեամբ, շօշափելի իրագործումներով ու իր հօտին ու ժողովուրդին նկատմամբ արտայայտուած զգայնութեամբն ու հոգածութեամբը, որքան որ կը ճանչնանք Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետը, վստահ ենք, որ Հայ Եկեղեցին պիտի առաջնորդէ իր պատկառելի պատմութեան համապատասխան և ինք՝ արժանի տեղը պիտի գրաւէ Հայ Եկեղեցւոյ մեծանուն Հայրապետներու դասին մէջ:

Նորին Սրբութեան գործունեութեան սկզբին, մեզի կը մնայ բոլորուիլ իր շուրջը, ցուցաբերել հաւատարմութիւն ու զօրակցութիւն, ընել ամէն ինչ, որպէսզի իր ստանձնած «լուծը ըլլայ քաղցր և բեռը՝ փոքր»:

Այս առթիւ, Գերմանիոյ Հայոց թեմի հոգևոր դասը, Հայ համայնքներու վարչութիւններն ու մենք անձնապէս, անգամ մը ևս կը ներկայացնենք մեր սրտագին շնորհաւորութիւնները և կ'աղօթենք Նորին Սրբութեան պաշտօնավարութեան շրջանին համար լիակատար յաջողութիւն: Տէրը միշտ անսասան պահէ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Հայ Եկեղեցին, Հայոց Հայրենիքն ու ժողովուրդը: